11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը².
- 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 4) պայմանագիր չի կնքվում:

11.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, Պատվիրատուն www.gnumner.am կայքում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԵՐԱՎՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.1.1 Յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ Պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի գործողությունների հետևանքով խախտվել են կամ կարող են խախտվել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, իրավունք ունի ահազանգելու կենտրոնի թեժ գծին:

12.1.2 Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման վերաբերյալ կենտրոնի թեժ գծին ահազանգ ստանալու դեպքում՝

1) կենտրոնն ստացված ահազանգի վերաբերյալ կազմում է արձանագրություն, եթե առկա են հետևյալ տեղեկությունները՝

ա. Պատվիրատուի անվանումը,

բ. գնման ընթացակարգի ծածկագիրը կամ առարկան,

գ. գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առարկան,

² Ընդ որում պետության կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել ՀՀ կառավարության որոշման հիման վրա:

դ. ահազանգողի անունը (անվանումը), եթե այն հայտնի է.

2) կենտրոնի պետի հանձնարարականով կենտրոնի պաշտոնատար անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսակապ է հաստատում տվյալ ընթացակարգի գնումների համակարգողի, իսկ անհնարինության դեպքում՝ Պատվիրատուի ղեկավարի կամ աշխատակազմի ղեկավարի հետ և վերջինիս տեղեկացնում է ստացված ահազանգի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնում է Պատվիրատուի կողմից կենտրոնին ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Կենտրոնն ստացված ահազանգի, ինչպես նաև ներկայացվելիք փաստաթղթերի ցանկի վերաբերյալ սույն ենթակետով նախատեսված ժամկետում ծանուցում է նաև էլեկտրոնային փոստով՝ Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեի առկայության դեպքում.

3) Պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով սկանավորված տարբերակով կենտրոնին է տրամադրում պահանջված փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ստացված ահազանգի վերաբերյալ Պատվիրատուի գրավոր կարծիքը.

4) եթե Պատվիրատուի կողմից ընդունվում է կատարված խախտումը և վերջինս համաձայնում անմիջապես վերացնել այն, ապա արձանագրված խախտման և դրա վերացման մասին տեղեկատվությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է կենտրոնին.

5) եթե Պատվիրատուն գտնում է, որ ահազանգված խախտումն առկա չէ, ապա՝

ա. մեկ աշխատանքային օրվա ընթացքում կենտրոն է ներկայացնում գրավոր հավաստում խախտման բացակայության մասին, ինչպես նաև՝ տվյալ գնման ընթացակարգին վերաբերող պահանջված փաստաթղթերի պատճենները,

բ. պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերի պատճեններն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում կենտրոնում հրավիրվում է քննարկում, որին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ կողմերը,

գ. հրավիրված քննարկման վերաբերյալ կազմվում է արձանագրություն,

դ. քննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում արձանագրվելու դեպքում, կենտրոնի պետի հանձնարարականով, կենտրոնը բողոքարկման գործընթաց է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում,

ե. կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր՝ կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են Պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, կենտրոնի կողմից արձանագրված խախտման առարկան և պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

6) կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքը քննվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով:

12.2 Գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ դիմում ներկայացնելով՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Կոմիտասի 54/բ, 115 սենյակ հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները:

12.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.

2) Պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը, ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար դրամ, որը պետք է փոխանցվի «Հայէկոնոմբանկի Արաբկիրի» մ/ճ, Հ/Հ 163058100971 «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվեհամարին: Լիազոր մարմնի և գնումների աջակցման կենտրոնի կողմից գնումների բողոքարկման խորհրդում բողոքարկման գործընթաց նախաձեռնվելու դեպքում բողոքարկման համար վճար չի կատարվում.

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.5 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն մասի 8.8 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

12.6 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 48-րդ հոդվածի պահանջներին, ապա գնումների աջակցման կենտրոնը խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ:

12.7 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, Պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա գտնվելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.7.1 Բողոքի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում գնումների բողոքարկման խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչը:

12.8 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

12.9 Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ Պատվիրատուի, հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելու ուղղված միջոցներ:

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում Պատվիրատուի կամ հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն մասի 8.8 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե Պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց Օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. Օրենքի 9-րդ հոդվածի կամ սույն մասի 12.17 կետի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը գրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագրի կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

4) եթե, սույն մասի 12.6 կետի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. Պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում:

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն մասի 3-րդ ենթակետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն մասի կետի 4-րդ ենթակետի «ա» մասով նախատեսված պատժամիջոցը:

6) հայտարարելու Պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար:

7) որոշում կայացնելու Մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

12.10 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.11 Բողոքի բանավոր քննությունը բաց է հանրության համար և բողոքը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

12.12 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը գրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.13 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, հրապարակվում է տեղեկագրում և ուղարկվում է Պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

12.14 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել Պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.15 Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

12.16 Խորհուրդը հաշվի է առնում ժամանակավոր միջոցի հնարավոր հետևանքները բոլոր այն շահերի, այդ թվում՝ հանրային շահի համար, որոնք կրելու են վնասներ, և կարող է կայացնել նման միջոց չկիրառելու մասին որոշում, եթե դրա բացասական հետևանքները կարող են գերազանցել օգուտը: Ժամանակավոր միջոց չկիրառելու մասին որոշումը չի կարող ազդել նման միջոցի դիմած անձի որևէ այլ հայցի վրա:

12.17 Բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հրավերի 12.15-րդ կամ 12.16-րդ կետերով նախատեսված որոշման ընդունումը Պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

ՄԱՍ II
Հ Ր Ա Հ Ա Ն Գ
Բ Ա Ց Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Հ Ա Յ Տ Ը Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ ՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը (ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հրահանգի 3.2 կետում նշված դեպքերի) պետք է կազմված լինեն հայերեն:

Գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում, (եթե նախատեսվում է սույն հրավերով) հայտերը հայերենից բացի կարող են ներկայացվել նաև անգլերեն և (կամ) ռուսերեն:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ:

Հայտը սույն հրավերով նախատեսված կարգով սույն ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է:

Ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները)՝ սույն հրավերի առաջին մասի 7.9-րդ կետով սահմանված կարգով:

Մասնակիցը Հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

2.2 ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N°1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

2.2.1 «Մասնակցության իրավունքը» չափանիշի՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված այն մասին, որ Մասնակիցը՝

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N 2 հավելվածում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի 2.2.1 կետով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին: Բացի հայտարարությունից, 2.2.1 կետով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցվել է Մասնակցի՝ գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման դրսևորման փաստը, ապա տվյալ Մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.2.2. հայտի ապահովում՝ տուժանքի ձևով (Հավելված N°9),

2) «Տեխնիկական չափորոշիչ».

2.2.3 Հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին (Հավելված N°3.1)

1) որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց)

շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2) Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները հետևյալն են. սույն հրավերով պահանջվող լիցենզիայի շրջանակներում աշխատանքների կատարումը:

Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ Մասնակցի:

2.2.4 Հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին (Հավելված N°3.2), այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.5 Հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին (Հավելված N°3.3), որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին (Հավելված N°3.4), այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.6 Հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին (Հավելված N°3.5), այդ դեպքում Մասնակիցը համարվում է սույն կետի պահանջին բավարարող:

2.2.7 Սույն հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը:

2.2.8 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

2.2.9 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)³:

3) «Ֆինանսական չափորոշիչ».

2.2.10 գնային առաջարկ, որը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում (Հավելված N°4),

3. ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին gnp@yandex.ru է ուղարկում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

ա) նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում

³ Համադրել գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով րվյալ անդամի սրանձնաձ պարտավորության:

կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

բ) այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք Մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ (Հավելված №5.1): Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ Մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

գ) տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին (Հավելված №5.2): Նշված տեղեկանքին անհրաժեշտ է կցել հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնություններ՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

3.2 Հայտում ներառվող՝ դիպլոմների պատճենները, տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով, եթե դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած չեն ճանաչվել (համարվել):

3.3 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.4 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

4. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

4.1 Առաջարկվող գինը աշխատանքների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով Համակարգի միջոցով:

4.1.1 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե Մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա Մասնակցի կողմից սույն հրավերի առաջին մասի 7.9-րդ կետով սահմանված կարգով ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝

ա. Մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. շինարարական ծրագրերի գնման դեպքում Մասնակիցը չի ներկայացնում իր կողմից կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, իսկ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում կնքվող պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

4.2 Եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով և Համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ -ն հայտարարում է, որ ցանկություն ունի գրանցվելու ՀՀ էլեկտրոնային գնումների համակարգի www.armeps.am կայքում որպես տնտեսական օպերատոր (գնման գործընթացներում հնարավոր մասնակից):

Միաժամանակ _____ -ն հայտարարում և հավաստում է, որ ծանոթացել է ՀՀ գնումների մասին օրենսդրությանը, ինչպես նաև ընդունում է դրանից բխող քաղաքացիաիրավական պարտավորությունները և պատասխանատվություն է կրում www.armeps.am կայքում իր գրանցման հասցեից կատարվող բոլոր գործողությունների (անգործության) համար:

անվանումը

ստորագրությունը

Կ.Տ.

Դ Ի Մ ՈՒ Մ
Բ Ա Ց Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ե Լ ՈՒ

_____Որոշակագրի մասնակցի անվանումը (անունը)_____ -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու ՀՀ բնապահպանության նախարարության կողմից «ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01» ծածկագրով հայտարարված բաց ընթացակարգին, հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը և համաձայն է սույն հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումը և դրա հետ կապված՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործողություններն իրականացնելու համար:

- _____Որոշակագրի մասնակցի անվանումը (անունը)_____ -ն հայտնում և հավաստում է, որ.
1. իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
 - 1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
 - 2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի.

2. հանդիսանում է _____ Երկրի անվանումը _____ ռեզիդենտ:

_____Որոշակագրի մասնակցի անվանումը (անունը)_____ -ն հայտնում է, որ ունի «ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01» ծածկագրով հայտարարված բաց ընթացակարգի հրավերով նախատեսված լիցենզիա(ներ) (պատճենը կցվում է «Տեխնիկական չափորոշիչ» բաժնում):

_____Որոշակագրի մասնակցի անվանումը (անունը)_____ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____Մասնակցի հարկ վճարողի հաշվառման համար _____:

_____Որոշակագրի մասնակցի անվանումը (անունը)_____ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ _____Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե _____:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ԻՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

_____Ութացակարգի մասնակցի անվանումը (անունը)_____-ն հայտնում և հավաստում է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ.

- 1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,
- 2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,
- 3) _____Ութացակարգի մասնակցի անվանումը (անունը)_____-ի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
- 4) _____Ութացակարգի մասնակցի անվանումը (անունը)_____-ն ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,
- 5) բացակայում է գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույնով _____
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը) -ն հայտնում և հավաստում է, որ «ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01» ծածկագրով բաց ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է _____
(համանման (նմանատիպ) պայմանագրի(երի) անվանումը(ները)) որի ընդհանուր արժեքը կազմել է _____ ՀՀ դրամ և պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդ որում դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը) -ն «ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01»
ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում հայտնում և հավաստում է, որ
կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ
տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք
գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

Սույնով _____
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը) -ն պարտավորվում է սույն
հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝
հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը) _____-ն հայտնում և հավաստում է, որ
«ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01» ծածկագրով բաց ընթացակարգի հայտը ներկայացնելուն
նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ
ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի
գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____-ն «ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01»
ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում հայտնում և հավաստում է, որ
կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ
ֆինանսական միջոցներ և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք
գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

⁴ եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա մասնակիցը
հայրով ներկայացնում է սույն հավելվածը,

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով _____ ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը) _____-ն «ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում հայտարարում և հավաստում է, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքնային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

Սույնով _____ ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը) _____-ն պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Գ Ն Ի Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)					
Հափա- բաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6=3+4+5
1	«Գնման առարկայի հափաբաժնի անվանում N1»				

***Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:**

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

**«ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01» ծածկագրով
բաց ընթացակարգի հրավերի**

Կից ներկայացնում եմ _____-ի՝ «ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01»
ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման
չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված
փաստաթղթերը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ (ՍԱՐՔԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

N ը/կ	Տեխնիկական միջոցի (սարքի, սարքավորման տեսակը)	Տեխնիկական միջոցի (սարքի, սարքավորման) մակնիշը, պետհամարանիշը (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը

- «ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում կից ներկայացնում ենք տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ Մասնակցի սեփականությունը կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի պատճենները:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**ԿՆՔՎԵԼԻՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ**

N	Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
	Անունը, Ազգանունը	Որակավորումը	Աշխատանքային փորձը		Գործատուի անվանումը
			Ժամանակա- հատվածը	Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5	6
1.					
2.					
3.					
...					
...					

«ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում կից ներկայացնում ենք _____

(հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատված գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:)

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ-ԲՆ-ԲԸ-ԱՇՁԲ-17/01»**

ք.Երևան

«___» «_____» 2017թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Խ.Աղաբեկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «_____» _____-ն, ի դեմս Ընկերության տնօրեն _____ի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի Հավելված N°1-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքները** (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:
- 1.2. Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան: Սույն պայմանագրով նախատեսված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների կատարման նպատակով անտառահատման տոմսերի կամ սանիտարական և խնամքի հատման թույլտվություն տրամադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Պատվիրատուի իրավական ակտով կամ հանձնարարականով:
- 1.3. Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **2017 թվականի դեկտեմբերի 5-ը**:
Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված տեխնիկական բնութագիր-օրացուցային գրաֆիկով (Հավելված N°2):

2. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

- 2.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի «ՀՀ 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Սևանա լճի անտառտնկարկների մաքրման առանձին գործողությունների նորմաները հաստատելու մասին» N 809-Ն որոշումը՝ պայմանագրի գործողության ընթացքում աշխատանքների կատարման որակի բարելավման և ինքնարժեքի իջեցման նպատակով, Պատվիրատուն ձեռնարկում է միջոցներ, որպեսզի Կապալառուին տրամադրվի «Վոթերմաստեր Կլասիկ III» ինքնագնաց բազմաֆունկցիոնալ էքսկավատորը և դրան կցվող սարքավորումները (այսուհետև՝ Գույք):
- 2.2. Սույն պայմանագրի 2.1 կետով նախատեսված Գույքի օգտագործման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Գույքը տնօրինողի և Կապալառուի միջև կնքվող առանձին պայմանագրով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի «ՀՀ 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Սևանա լճի անտառտնկարկների մաքրման առանձին գործողությունների նորմաները հաստատելու մասին» N 809-Ն որոշմամբ սահմանված կատարման ենթակա աշխատանքների ծավալները:
- 2.3. Աշխատանքների ամբողջ ծավալի կատարման համար Կապալառուն ապահովում է պահանջվող տեխնիկական մյուս միջոցները:
- 2.4. Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

- 3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

- 3.1.2. Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
- 3.1.3. Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:
- 3.1.4. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.
- ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,
 - բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),
 - գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,
 - դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.
- 3.1.5. Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:
- 3.1.6. Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.
- 3.1.7. Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

- 3.2.1. Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.
- 3.2.2. Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.
- 3.2.3. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.
- 3.2.4. Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:
- 3.2.5. Ձեռնարկել միջոցներ սույն պայմանագրի 2.1 կետով նախատեսված Գույքը Կապալառուին տրամադրման համար:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

- 3.3.1. Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:
- 3.3.2. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
- 3.3.3. Պատվիրատուից պահանջել ձեռնարկելու համապատասխան միջոցներ սույն պայմանագրի 2.1 կետով նախատեսված Գույքն իրեն տրամադրելու համար:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

- 3.4.1. Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:
- 3.4.2. Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:
- 3.4.3. Սույն պայմանագրով նախատեսված մաքրման աշխատանքների արդյունքում գոյացած փայտանյութը (չինափայտ, վառելափայտ, ջախ) կատարողը հանձնում է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին՝ նրա հետ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:
- 3.4.4. Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել

Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

- 3.4.5. Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:
- 3.4.6. Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:
- 3.4.7. Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:
- 3.4.8. Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

- 4.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված №3) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1): Սույն կետով նախատեսված պայմանի խախտումը համարվում է աշխատանքների կատարման ժամկետի խախտում:
- 4.2. Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝
 - 1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.
 - 2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
- 4.3. Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:
- 4.4. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:
- 4.5. Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:
- 4.6. Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝
 - 1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.
 - 2) Կապալառուի կողմից կատարված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ ընդունող հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.
 - 3) մինչև ավարտված աշխատանքների ընդունումը՝ ընդունող հանձնաժողովը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված աշխատանքները և կազմում ակտ.
 - 4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է կատարված աշխատանքների համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

- ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը,
- բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.
- 5) մինչև սույն պայմանագրի 4.6 կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:
- 4.7. Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն::

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----- (-----) ՀՀ դրամ, որից ----- (-----) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 30 տոկոսը (-----) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

